ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2023

ԴԱՇՆԱՄՈՒՐ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Հնչյունը ֆիզիկական երևույթ է, որն ունի հետևյալ հատկությունները.

1) բարձրություն, հզորություն, տևողություն և օբերտոն
2) բարձրություն, ուժգնություն, տևողություն և տեմբր
3) բարձրություն, ուժգնություն, տևողություն և արագություն
4) բարձրություն, ուժգնություն, հնչողություն և նրբբերանգ

2 Լարվածք է կոչվում

1) երաժշտական հնչյունների կանոնավոր շարվածքը
2) երաժշտական համակարգի հնչյունների հավասար բարձրությունը
3) երաժշտական համակարգի հնչյունների բացարձակ բարձրությունը
4) երաժշտական հնչյունների դասավորությունը

3 Ինտերվալներն ունեն երկու մեծություն՝

1) աստիճանային և տոնային
2) աստիճանական և լրացուցիչ
3) բացարձակ և տոնային
4) բացարձակ և լրացուցիչ

4 Փոքր սեպտիման կազմված է

1) 7 աստիճանից և 6 տոնից
2) 7 աստիճանից և 5 տոնից
3) 6 աստիճանից և 7 տոնից
4) 6 աստիճանից և 5 տոնից

5 Եռատոնն այն ինտերվալն է, որը բաղկացած է

1) երեք տոնից
2) երեք հնչյունից
3) երեք աստիճանից
4) երեք կիսատոնից

6 Մինոր կվարտսեքստակորդի կառուցվածքն է

1) մք.4+ մ.3
2) մք.4 + փ.3
3) մ.3 + մծg. 3
4) մծg. 4+փ.3

7 Սեքստակորդը եռահնչյան

1) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
2) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
3) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
4) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը

8 $D3^{4-}$ ը կառուցվում է

1) 2-րդ աստիճանի վրա և նրա կառուցվածքն է փ.3+ մ.2+ փ.3
2) 2-րդ աստիճանի վրա և նրա կառուցվածքն է փ.3+ մ.2+ մ.3
3) 7-րդ աստիճանի վրա և նրա կառուցվածքն է փ.3+ մ.2+ փ.3
4) 7-րդ աստիճանի վրա և նրա կառուցվածքն է փ.3+ մ.2+ մ.3

9 Զուգահեռ տոնայնություններն ունեն

1) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
2) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
3) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
4) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ

10 Հարմոնիկ մաժորին բնորոշ է

1) 6^{-}, 7^{-} աստիճանները
2) 6^{-} աստիճանը
3) 6^{+} աստիճանը
4) 7^{+} աստիճանը

11 Մելոդիկ մինորին բնորոշ է

1) 6^{+}, 7^{+} աստիճանները
2) 6^{-}, 7^{-} աստիճանները աստիճանը
3) 6^{+} աստիճանը
4) 7^{-} աստիճանը

12 Ռիթմ է կոչվում

1) միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը
2) միատեսակ հնչյունների կազմակերպված հաջորդականությունը
3) միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների հաջորդականությունը
4) հնչյունների ժամանակային կազմակերպված հաջորդականությունը

13 Պարզ են համարվում այն չափերը, որոնք ունեն

1) մեկ մաս
2) մեկ շեշտ
3) մի քանի շեշտ
4) մեկ կամ մի քանի մաս

14 Տակտում կա այնքան խումբ, որքան

1) շեշտերի քանակն է
2) թույլ մասերի քանակն է
3) հնչյունների քանակն է
4) հիմնական մասերի քանակն է

15 Այն նշանը, որը դրվում է հնգագծի սկզբում և ցույց է տալիս որոշակի նոտայի տեղը, կոչվում է

1) բանալի
2) ակոլադ
3) նոտա
4) չափ

16 Նշվածներից ո՞ր շարքում են ընդգրկված միայն զարդահնչյունները /մելիզմները/

1) արպեջիո, ֆիգուրացիա, տրիոլ, տրեմոլո
2) մորդենտ, տրեմոլո, արպեջիատո, ֆորշլագ
3) ֆորշլագ, տրել, մորդենտ, գրուպետտո
4) ֆորշլագ, ֆիգուրացիա, գրուպետտո, տրել

17 Նշվածներից ո՞ր շարքում են բոլոր տերմինները նշանակում տեմպ

1) A tempo, Lento, ritenuto
2) Prestissimo, Festivo, Moderato
3) Largo, accelerando, Andante
4) Allegro, Grave, attacca

18 Ո՞ր շարքի աստիճաններն են պատկանում սուբդոմինանտային խմբին

1) I, III, VII
2) III, V, IV
3) I, IV, VI
4) VI, IV, II

19 Ո՞ր շարքում են ընդգրկված Ազատ ոճի պոլիֆոնիայի գրելաձևերը

1) ստրետտա, մոտետ
2) կանոն, ֆուգետտա
3) Ֆուգա, ինվենցիա
4) կոնտրապունկտ, իմիտացիա

20 Սոնատային ձևը այն ձևն է, որը

1) հիմնված է երեք թեմաների հակադրության վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում, ռեպրիզ
2) հիմնված է երկու թեմաների նմանակման վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, ռեպրիզ, մշակում
3) հիմնված է երկու թեմաների հակադրության վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում, ռեպրիզ
4) հիմնված է երկու թեմաների նմանակման վրա և ծավալվում է երկու բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում

21 Դաշնամուրի և նվագախմբի համար գրված քանի՞ կոնցերտ ունի Լյուդվիգ վան Բեթհովենը

1) 6
2) 4
3) 3
4) 5

22 Ո՞ր կոմպոզիտորի ստեղծագործության մեջ է ձևավորվել սոնատ-սիմֆոնիկ ցիկլը

1) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
2) Լյուդվիգ վան Բեթհովեն
3) Դոմենիկո Սկարլատի
4) Յոզեֆ Հայդն

23 Դաշնամուրային քանի՞ սոնատի հեղինակ է Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը

1) 19
2) 32
3) 24
4) 20

24 Վ.Ա.Մոցարտի դաշնամուրային կոնցերտների մասերը սովորաբար հաջորդում են հետևյալ սկզբունքով.

1) Արագ – արագ-դանդաղ
2) Դանդաղ – դանդաղ -արագ
3) Դանդաղ – արագ - դանդաղ
4) Արագ – դանդաղ – արագ

25 Զարդված արպեջիոներով բասերն անվանում են

1) «Հայդնյան»
2) «Ալբերտյան»
3) «Մարկիզյան»
4) «Մոցարտյան»

26 Կառլ Չեռնիի ուսուցողական ժողովածուներից ո՞րն է առավել լայնորեն կիրառվում մանկավարժական պրակտիկայում

1) «Legato-ի և Staccato-ի դպրոց», op. 335
2) «40 ամենօրյա վարժություններ», op. 337
3) «100 պիես-վարժություն», op.139
4) «Արագավարժության դպրոց», op.299

27 Նշված հասկացություններից ո՞րը մելիզմ չէ

1) Գրուպետտո
2) Ֆորշլագ
3) Մորդենտ
4) Տրիոլ

28 Ո՞ր կոմպոզիտորն է գրել Կոնցերտ ձախ ձեռքի համար

1) Քամիլ Սեն-Սանս
2) Ֆերենց Լիստ
3) Կլոդ Դեբյուսի
4) Մորիս Ռավել

29 Թվարկված կոմպոզիտորներից ո՞վ չի պատկանում ֆրանսիական կլավեսինիստներին.

1) Դոմենիկո Սկարլատի
2) Լուի Կլոդ Դակեն
3) Ֆրանսուա Կուպերեն
4) Ժան Ֆիլիպ Ռամո

30 Թվարկված հասկացություններից ո՞րը չի վերաբերում ռիթմիկ պատկերին.

1) Հեմիոլ
2) Տրել
3) Կետագծային
4) Սինկոպա

31 Դոմենիկո Սկարլատիի ավելի քան 500 սոնատները գրված են

1) Դասական սոնատային ձևում
2) Բարդ եռամաս ձևում
3) Հնագույն սոնատային ձևում
4) Հնագույն երկմաս ձևում

32 Մանկավարժական երկացանկում տեղ չի գտել Յոհան Սեբաստիան Բախի

1) 15 երկձայն և 15 եռաձայն ինվենցիաները
2) «Լավ տեմպերացված կլավիրը»
3) «Աննա Մագդալենա Բախի նոթատետրը»
4) «Ֆուգայի արվեստը»

33 Երկրորդ աշխարհամարտի տարիներին Երևանի կոնսերվատորիայում է դասավանդել

1) Կոնստանտին Իգումնովը
2) Հենրի Նեյգաուզը
3) Սվյատոսլավ Ռիխտերը
4) Յակով Ֆլիերը

34 Յոհան Սեբաստիան Բախի կլավիրային ստեղծագործությունների հայտնի խմբագրողներից ո՞վ է առավել մոտ մնացել հեղինակային բնագրին

1) Բրունո Մուջելինին
2) Բելա Բարտոկը
3) ՄենՖեռուչո Բուզոնին
4) Կառլ Չեռնին

35 Ռոմանտիզմի ներկայացուցիչ կոմպոզիտորներից ո՞ւմ անվան միջազգային մրցույթն է բացառապես նվիրված մեկ հեղինակի ստեղծագործությունների կատարմանը

1) Ֆրեդերիկ Շոպեն
2) Յոհաննես Բրամս
3) Ֆրանց Շուբերտ
4) Ռոբերտ Շուման

36 Նշեք հայ դաշնակահարի, ով Բախի անվան միջազգային մրցույթին 1-ին մրցանակի է արժանացել

1) Կարինե Օհանյան
2) Արմեն Բաբախանյան
3) Սվետլանա Նավասարդյան
4) Անահիտ Ներսիսյան

37 Հետևյալ դաշնամուրային ցիկլերից ո՞րը չի պատկանում Ռոբերտ Շումանին

1) «Մանկական ալբոմ»
2) «Սիմֆոնիկ էտյուդներ»
3) «Թիթեռնիկներ»
4) «Կառնավալ»

38 Նշեք Արամ Խաչատրյանի մանկական ցիկլը

1) «Մանուկներին»
2) «Ծեր տատիկի հեքիաթները»
3) «Մանկական ալբոմ»
4) «Ալբոմ թոռնիկիս»

39 Նշեք Սերգեյ Պրոկոֆևի մանկական ցիկլը

1) «Մանկական անկյուն»
2) «Ծեր տատիկի հեքիաթները»
3) «Մանկական ալբոմ»
4) «Մանկական տետր»

40 Նշեք Կլոդ Դեբյուսիի «Մանկական անկյուն» դաշնամուրային ցիկլից պիեսի անվանումը



1) Փոքրիկ հովիվը
2) Տիկնիկային քեք-ուոք
3) Տիկնիկի սերենադը
4) Ձյունը պարում է

41 Նշված կոմպոզիտորներից ո՞վ չի գրել «Պրելյուդներ և ֆուգաներ» դաշնամուրային ցիկլ.

1) Դմիտրի Շոստակովիչ
2) Ֆրեդերիկ Շոպեն
3) Յոհան Սեբաստիան Բախ
4) Ռոդիոն Շչեդրին

42 Սանկտ-Պետերբուրգյան դաշնամուրային կատարողական դպրոցի ներկայացուցիչ է

1) Յուրի Հայրապետյանը
2) Աննա Ամբակումյանը
3) Վաչե Ումր-Շատը
4) Ռոբերտ Անդրիասյանը

43 Կոմպոզիտորական ի՞նչ տեխնիկա է կիրառել Առնո Բաբաջանյանը «Վեց պատկեր»-ում

1) Դոդեկաֆոն
2) Պոլիֆոնիկ
3) Պուանտիլիստական
4) Մոդալ

44 Նշեք հայ դաշնակահարի, ով Յո.Ս.Բախի և Վ.Ա.Մոցարտի բոլոր դաշնամուրային կոնցերտների կատարողն է եղել

1) Արմեն Բաբախանյան
2) Մարինե Աբրահամյան
3) Սվետլանա Նավասարդյան
4) Անահիտ Ներսիսյան

45 Նշեք հայ դաշնակահարի, ով իրականացրել է հայ դաշնամուրային երաժշտության անթոլոգիայի ամբողջական ձայնագրությունը

1) Մարինե Աբրահամյան
2) Հայկ Մելիքյան
3) Սվետլանա Նավասարդյան
4) Արմեն Բաբախանյան

46 Քանի՞ տետրից է բաղկացած Ֆերենց Լիստի «Ճամփորդության տարիները» դաշնամուրային ալբոմը

1) 5
2) 6
3) 2
4) 3

47 Ընտրեք Յոհաննես Բրամսի՝ 4 ձեռքի համար գրված ստեղծագործությունը

1) Վարիացիաներ սեփական թեմայով
2) Վարիացիաներ Շումանի թեմայով
3) Վարիացիաներ Պագանինիի թեմայով
4) Վարիացիա և ֆուգա Հենդելի թեմայով

48 Քանի՞ պիեսից է բաղկացած Պյոտր Չայկովսկու «Տարվա եղանակները» դաշնամուրային ցիկլը

1) 12
2) 24
3) 4
4) 16

49 Նշեք Պաուլ Հինդեմիթի «Ludus tonalis» դաշնամուրային ցիկլի ճիշտ կառուցվածքը

1) 12 ինտերլյուդիա, 12 ֆուգա և Պոստլյուդ
2) 12 ինտերլյուդիա, 12 ֆուգա
3) Պրելյուդ, 12 ֆուգա, 11 ինտերլյուդիա և Պոստլյուդ
4) Պրելյուդ, 12 ֆուգա, 12 ինտերլյուդիա և Պոստլյուդ

50 Նշեք նկարչին, ում աշխատանքների ազդեցության ներքո է գրված Մոդեստ Մուսորգսկու «Պատկերներ ցուցահանդեսից» դաշնամուրային պիեսների շարքը

1) Վիկտոր Գարտման
2) Գեորգի Յակուլով
3) Միխայիլ Վռուբել
4) Էռնստ Նեիզվեստնի

51 Ո՞ր ստեղծագործությունն է պատկանում Ռոբերտ Շումանին

1) Մանկական պատկերներ
2) Երաժշտական ակնթարթներ
3) Մանկական ալբոմ
4) Բալլադներ

52 Լյուդվիգ վան Բեթհովենի դաշնամուրային ո՞ր սոնատից է հատվածը



1) թիվ 23՝ «Ապասիոնատ»
2) թիվ 29՝ «Համերկլավիր»
3) թիվ 8՝ «Պաթետիկ»
4) թիվ 21՝ «Ավրորա»

53 Ո՞ր ստեղծագործությունն է պատկանում Ֆրանց Շուբերտի գրչին

1) «Abegg» վարիացիաներ
2) «Արցունք»
3) «Թափառականը» ֆանտազիան
4) «Թիթեռնիկներ»

54 Ֆրեդերիկ Շոպենի ո՞ր նոկտյուրնից է հատվածը



1) Opus 37՝ g-moll
2) Opus 48՝ c-moll
3) Opus 9՝ Es-dur
4) Opus 27՝ Des-dur

55 Քանի՞ տետրից է բաղկացած Բելա Բարտոկի «Միկրոկոսմոս» դաշնամուրային ցիկլը

1) 6
2) 7
3) 3
4) 4

56 Երաժշտական դպրոցների ծրագրում ո՞ր դասարանից է ներառված Յոհան Սեբաստիան Բախի «Փոքրիկ պրելյուդներն ու ֆուգաները»

1) 6-րդ
2) 7-րդ
3) 3-րդ
4) 4-րդ

57 Ո՞ւմ գրչին է պատկանում դաշնամուրային պարերի հատվածը



1) Նիկողայոս Տիգրանյան
2) Ռոբերտ Անդրիասյան
3) Կոմիտաս
4) Քրիստափոր Կառա-Մուրզա

58 Երաժշտական դպրոցների ծրագրում ո՞ր դասարանից է ներառված Գայանե Չեբոտարյանի «Դաշնամուրային երաժշտություն երեխաների համար» ժողովածուն

1) 1-ին
2) 4-րդ
3) 2-րդ
4) 3-րդ

59 Ո՞ւմ գրչին է պատկանում դաշնամուրային պիեսի հատվածը



1) Ռոբերտ Անդրիասյան
2) Գեորգի Սարաջև
3) Կոմիտաս
4) Էդվարդ Միրզոյան

60 Ո՞ւմ գրչին է պատկանում հետևյալ հատվածը



1) Առնո Բաբաջանյան
2) Ալեքսանդր Հարությունյան
3) Արամ Խաչատրյան
4) Ռոդիոն Շչեդրին